



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՆԻՇԿԱԳՐԱԿԱՆ

2020





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՈՒԺԱՌԱՐԱՄ

2020



ԵՐԵՎԱՆ 2021



Մարտին Գալստյան

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ

Հարցելի ընթերցող

Սիրով ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ 2020» տարեկան համելքը:

Ավանդույթի համաձայն՝ 2020 թ. ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է մի շարք հուշադրամներ՝ նվիրված հայ անվանի անհատների, այդ թվում աշխարհահռչակ ֆրանսահայեր՝ կինոռեժիսոր Անրի Վեռնոյի և նկարիչ Ժանսեմի ծննդյան 100-ամյա, հայկական կինոյի և թատրոնի նշանավոր դերասան Հրաչյա Ներսիսյանի ծննդյան 125-ամյա և տաղանդավոր գեղանկարիչ Եղիշե Թաղևոսյանի ծննդյան 150-ամյա հորելյաններին: Այս մեծանուն անհատներից յուրաքանչյուրը, շնորհիվ կինոարվեստի, թատրոնի, նկարչության ոլորտներում ձեռք բերած վաստակի և հաջողությունների, իր ուրույն տեղն է զբաղեցրել ոչ միայն հայկական, այլև համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

2020 թ. հատկանշական է եղել մեկ այլ հորելյանով ևս. նշվել է հայ ազգային-ազատագրական շարժման հերոս Գևորգ Զավուշի ծննդյան 150-ամյակը: Այս հորելյանի

կապակցությամբ ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է «Գևորգ Զավուշ-150» հուշադրամը՝ համալրելով հայոց պատմության տարրեր ժամանակահատվածների գորավարմերին նվիրված հուշադրամների շարքը:

Նախկին ԽՍՀՄ ժողովուրդների համար նշանավոր իրադարձություն էր Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ պայքարում տարած հաղթանակի 75-ամյա հորելյանը: ՀՀ կենտրոնական բանկը, ի թիվս նախկին խորհրդային երկրների կենտրոնական բանկերի, 2020 թ. թողարկել է հաղթանակի 75-ամյակին նվիրված հուշադրամ՝ դրանով ևս մեկ անգամ արժեորելով Հայրենական մեծ պատերազմում թշնամու դեմ հերոսարար մարտնչած և նահատակված հայ ժողովրդի զավակների դերը հաղթանակի կերտման գործում:

Կարևորելով պետական հասարակական գործիչների դերակատարումը հայ ժողովրդի ազգային դիմագծի պահպանման գործում՝ թողարկել է Ամենայն Հայոց 125-րդ Կարողիկոս Խրիմյան Հայրիկի ծննդյան 200-ամյակին նվիրված հուշադրամը: Այս թողարկումով նշանավորվել է Խրիմյան Հայրիկի պատմական դերը հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում և նրա անմնացորդ նվիրումը հայրենիքին:

2020 թ. ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է գեղարվեստական ձևավորմամբ և տեխնիկական բարդ լուծումների կիրառմամբ նախադեպը չունեցող «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծարեն հուշադրամը՝ սերտորեն համագործակցելով Մայր Աբոն Սուրբ Էջմիածնի հետ:

Հավատարիմ մնալով ՀՀ կենտրոնական բանկի քաղաքականությանը արժույթի թողարկման ոլորտում, որը միտված է դրամանիշերի միջոցով հայ ժողովրդի դարավոր պատմության և մշակույթի տարածմանն ու ճանաչելիության ընդլայնմանը, յուրաքանչյուր տարի ՀՀ հուշադրամները ներկայացվում են մասնակցության միջազգային դրամագիտական մրցույթներում: 2020 թ. Ռուսաստանի Դաշնությունում անցկացված «Դրամների համաստեղություն-2020» 14-րդ միջազգային մրցույթում աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր և երաժշտագետ Կոմիտասի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշադրամը, որը թողարկվել է 2019 թ., գրադարձել է 3-րդ տեղը՝ «Տարվա հուշադրամը» անվանակարգում: Այս հերթական մրցանակը, անկասկած, գեղարվեստական ձևավորման բարձր մակարդակի և հատման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման արդյունք է:



Անվանի Սիմոնյան

«Հենարոնական բանկի
Արժույթի բողարկման
համակարգման
կենտրոնի ղեկավար»

ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐ 2020

2020 թ. ՀՀ կենտրոնական բանկը համագործակցել է Լիտվայի և Գերմանիայի «B.H. Mayer Mint» դրամահատարանների հետ և բողարկել ինը տեսակի հուշադրամ, որոնցից ութը՝ հորելյանական: Հորելյանական հուշադրամները հատվել են Լիտվայի դրամահատարանում՝ համալրելով հուշադրամների՝ «Անվանի անհատներ», «Պատմություն» և «Կրոն» թեմատիկ շարքերը:

«Անվանի անհատներ» թեմատիկ շարքը համալրվել է երկու ուսկե հուշադրամներով՝ նվիրված ֆրանսահայ աշխարհահոչակ նկարիչ Ժանսեմի ծննդյան 100-ամյա և հայ անվանի դերասան Հրաչյա Ներսիսյանի ծննդյան 125-ամյա հորելյաններին: Հուշադրամները ձևավորված են դասական ոճով, աչքի են ընկնում փոքր մակերեսների վրա նշանավոր գործիչների դիմապատկերների ընդգծվածությամբ, ինչպես նաև նրանց արվեստը ներկայացնող պատկերումներով:

«Անվանի անհատներ» թեմատիկ շարքի ներքո բողարկվել են նաև «Ժանսեմ-100», «Եղիշե Թաղևոսյան-150» և «Անրի Վեռնոյ-100» արծաթե հուշադրամները: Այս հուշադրամները տեղադրված են պատկերազարդ տեղեկատվական գրքույկներում, որտեղից կարելի է մանրամասն տեղեկություն ստանալ մեծատաղանդ արվեստագետների կենսագրության և գործունեության մասին, ինչը հավելվում է նրանց ստեղծագործական կյանքին վերաբերող գունազարդ պատկերներով և լուսանկարներով: Տվյալ հուշադրամները հատվել են գունավոր տամպոտպագրության տեխնոլոգիայի կիրառմամբ:

2020 թ. «Պատմություն» թեմայի շրջանակում, ի հիշատակ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 75-ամյակի, բողարկվել է արծաթե հուշադրամ, որն աչքի է ընկնում տվյալ թեմային բնորոշ խոհուն ձևավորմամբ ու տեխնիկական ժամանակակից լուծումներով: Տամպոտապագրության կիրառմամբ հաջողվել է ճշտությամբ վերարտադրել Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շրանցանի, ինչպես նաև Գեղրգիևան ժապավենի գրուավոր պատկերները:

Դասական ոճով են ձևավորվել ևս երկու արծաթե հուշադրամներ՝ նվիրված հայ ազատագրական շարժման հերոս Գևորգ Զավուշի ծննդյան 150-ամյակին և Ամենայն Հայոց Կաթողիկոս, հասարակական գործիչ Խրիմյան Հայրիկի ծննդյան 200-ամյակին: Հայ մարտիկի հզոր ու անկոտրում ոգին խորհրդանշող վահանը և բուրք հուշադրամի մակերեսին դարձել են առավել արտահայտիչ՝ խոր փորագրության կիրառման շնորհիվ, իսկ Խրիմյան Հայրիկի պատգամը սերունդներին և ստորագրությունը կատարվել են լազերային նուրբ փորագրությամբ:

Շարունակելով համագործակցությունը Գերմանիայի «B.H. Mayer Mint» դրամահատարանի հետ՝ 2020 թ. բողարկվել է «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամը՝ 1 կգ քաշով, որը ՀՀ կենտրոնական բանկի բողարկած հուշադրամների շարքում ուշագրավ ճեղքերում է: Այն առանձնանում է տեխնիկական կատարման բարդ լուծումներով. շնորհիվ հուշադրամի դիմերեսին և դարձերեսին կիրառված ուլտրաքարածր ռելիեֆի փորագրության տեխնոլոգիայի (Smartminting[©]), Մայր Տաճարի խորանի պատկերի մասնակի ոսկեզօծման և գունավոր տամպոտապագրության տեխնոլոգիայի օգտագործման՝ հուշադրամը ստացել է յուրօրինակ վեհաշուր տեսք: «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» հուշադրամի էսքիզների մշակման և տեղեկատվական նյութերի տրամադրման հարցում աջակցություն է ցուցաբերել Մայր Աքռո Սուրբ Էջմիածինը:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2020 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից բողարկված հուշադրամները թեմատիկայի, ինքնատիպ ձևավորման և հատման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ մեծ ուշադրության են արժանացել դրամանիշերի հավաքորդների և հասարակության լայն շրջանակներում:

ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՈՒԹՅԱԿ

Ծննդյան
200-ամյակ

Թեմա՝ ԿՐՈՆ
Քրիստոնեություն

ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ
ԽՐԻՍՏԱՆ (Խրիմյան Հայ-
րիկ, 1820-1907 թթ.), հաս-
րակական-քաղաքական,
մշակութային գործիչ, Ամենայն
Հայոց Կաթողիկոս 1893 թ-ից:

Սովորել է Արևիտյան Հայաստանի
Վասպուրական նահանգի Լիմ և Կտոր անա-
պատճերի դպրոցներում: Հիմնադրել է «Արծվի
Վասպուրական» (1855 թ.) և «Արծվիկ Տարոն»
(1863 թ.) հայկական պարբերականները, Վարա-
գավաճրին և Մշո Սր Կարապետ վանքին կից
ժառանգավորաց վարժարանները: 1854 թ. ձեռ-
նադրվել է վարդապետ, իսկ 1868 թ.՝ օծվել եախս-
կոպոս: Հայկական հարցը դիվանագիտական
ճանապարհով լուծելու նպատակով դիմել է Եվրո-
պական մի շաքք երկրների իշխանությունների:
1878 թ. գլխավորել է հայկական պատվիրակու-
թյունը Բեռլինի վեհաժողովում: Աջակցել է Վանի
«Սև խաչ» և Կարինի «Պաշտպան հայրենյաց»
ազգային-ազատագրական գաղտնի կազմակեր-
պուրյունների ստեղծմանն ու գործունեությանը,
որի համար աքսորվել է Երուսաղեմ: Ամենայն
Հայոց Կաթողիկոս օծվելուց հետո շարունակել է
ազգային-ազատագրական գործունեությունը:

Հեղինակ է կրոնափիլիսոփայական, բարոյա-
խոսական, չափածո ու այլ գրքերի, որոնցում ար-
տահայտել է ժողովրդի հույզերն ու տառապանքը:



Դիմերես՝ Խրիմյան բանգարան-դասկերասրահի
ժեմիք, զարդանախութեակ, «Երկար
ժերափ» հոււադրյութից հատված (գործ՝
Արեգ Խորայելյանի), Խրիմյան Հայրիկի
դասզամը և սոնրագրությունը:

Դարձերես՝ Խրիմյան Հայրիկի դիմադասկերը:

Էսիզների հեղինակն է Էդուարդ Կուրդինյանը:
Հոււադրամը հասել է Լիսվայի դրամահատանում:

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարգը	արծաք 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուիֆ
Դրամաշուրթը	առամնավոր
Թողարկման ժանակը	500հաս
Շրջանառության մեջ ե դրվել	05.03.2020 թ.

ԳԵՎՈՐԳ ԶԱՎՈՒՅԾ

Ծննդյան
150-ամյակ

թեմա՝ ԱՆՎԱՐՏԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հայ պորագարներ



ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒԾ (Գևորգ Ղազարյան, 1870 - 1907 թ.), հայ ազատագրական շարժման հերոս, ֆիդայի:

Սովորել է Մշո Սր Կարապետ վաճրի դպրոցում: Մասնակցել է Սասունի ինքնապաշտպանական կողմներին (1891-1894 թթ.): 1894 թ. սեպտեմբերին թուրքական կառավարությունը ձերբակալել է և դատապարտել Զավուշին 15 տարվա ազատազրկման: 1896 թ. բանտից փախել է Սասուն, ծանրթացել զորավար Անդրանիկի հետ և զինակցել նրան: 1901 թ. նաև նակցել է Բերդակի, Նորշենի և Առաքելոց վաճրի կողմներին, 1904 թ.՝ Սասունի ապստամբությանը, դեկավարել է Խշխամաձորի և Տալիրիկի ինքնապաշտպանական գործողությունները: Զավուշի մարտական խումբը Արևմտյան Հայաստանի տարրեր վայրերում հերոսաբար կռվել է թուրքական գերազանցող ուժերի դեմ: 1907 թ. մայիսի 27-ին թուրքական գորքերը շրջապատում են Զավուշի ջոկատը Մշո դաշտի Սուլուխ գյուղում, որի մասույցներում էլ կամրջի մոտ, նա զրիվում է անհավասար մարտում:

Զավուշը Արևմտյան Հայաստանում թուրքական վարչակարգի դեմ ոտքի ելած հայ ֆիդայական շարժման ակնառու դեմքերից է, իր ժողովրդի ազատագրման գործին նվիրված անձնազրի մարտիկ:

Զավուշի հուշարձանը (քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան) կանգնեցվել է Երևանում՝ համանուն իրապարակում: Նրա անունով կոչվել են փողոցներ, դպրոցներ Երևանում, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության այլ վայրերում:



Դիմերես՝ վահան և բուր՝ արևի տողերի ֆոնին:

Դարձերես՝ հայ հայդուկներին նվիրված հուշահանիսքից (քանդակագործ՝ Յու. Մինայան) հատված՝ Գևորգ Զավուշի դիմաքանդակի նախօրինակը, և թռվ արծիվ:

Հսկիզների հեղինակն է Կարապետ Արքահամյանը: Հուշարձանը հասելի է Լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարգը	արծաք 925 ^o
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրույֆ
Դրամաշուրբը	առամնավոր
Թողարկման բանակը	500 հաս
Ըցանառության մեջ է դրվել	21.04.2020 թ.

ԹԵՄԱ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայրենական
մեծ պատրիարքություն
սարսած հաղթանակի
75-ամյակ



այրենական մեծ պատերազմը
(1941 թ. հունիսի 22-1945 թ. մայիսի 9)

ԽՍՀՄ ժողովուրդների պատերազմն էր ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ, Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945 թթ.) կարևորագույն և վճռական մասը:

Թշնամու դեմ բոլոր ճակատներում խորիդային ժողովուրդների հետ հերոսաբար մարտնչեցին նաև հայ ժողովորդ ավելի քան 500 հազար զավակներ, որոնցից շուրջ 200 հազարը զոհվեցին մարտերում: 106 հայորդները արժանացան ԽՄ հերոսի կոչման, 27-ը՝ Փառքի երեք աստիճանների շքանշանների, ավելի քան 70 հազարը պարզեցարկեցին շքանշաններով և մեդալներով: ԽՍՀՄ զինվածութեան հետեւ արժանացան կազմում կային 60-ից ավելի հայ գեներալներ և ծովակալ, որոնք դեկավարում էին խոշոր զորամիավորումներ: Նրանց շարքերում էին բանակի գեներալ Հ. Բաղրամյանը (հետագայում՝ ԽՄ մարշալ), ԽՍՀՄ նավատօրմի ծովակալ Հ. Իսակովը, ավիացիայի մարշալ Ս. Խույակովը (Արմենիակ Խանիքերյանց), Հ. Բարաջանյանը (հետագայում՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ), գեներալներ Մ. Պարսեղովը, Ս. Գալաջնը, Ս. Մարտիրոսյանը, Հ. Մարտիրոսյանը, Ն. Սաֆարյանը, Ա. Կարապետյանը, Հ. Թումանյանը, Բ. Առուշանյանը և շատ ուրիշներ:

Մայիսի 9-ը Մեծ հայրանակի տոն է նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում յուրաքանչյուր ընտանիքի համար: Մեր հայրերն ու պապերն են կերտել



այդ հայրանակը՝ դաշնալով հերոսության և իրական հայրենակիրության օրինակ ապագա սերունդների համար:

Դիմերես՝ «Մայր Հայաստան» հուշարձանը
Երևանում և Հայրենական Պատերազմի 1-ին աստիճանի շքանշանը:

Դարձերես՝ վահան և Գեորգիկան ժաղավեն:

Էսիզների հեղինակն է Կարապետ Արքահամյանը:
Հուշադրամը հասվել է Լիսվայի դրամահատանում:

Անվանական արժեքը	75 դրամ
Սետաղը/հարգը	արծաք 925°
Քաշը	67,2 գ
Տրամագիծը	50,0 մմ
Ուրակը	դրուիդ
Դրամաշուրթը	արամնավոր
Թողարկման բանակը	500 համ
Շրջանառության մեջ է դրվել	21.04.2020 թ.

ԹԵՄԱ՝ ԱՆՎԱՆԻ ԱՆՀԱՏՆԵՐ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԵՂԻԾԵ ԹԱԴԵՎՈՅՑԱՆ *Ծննդյան 150-ամյակ*



ԵՂԻԾԵ ԹԱԴԵՎՈՅՑԱՆ (1870-1936 թթ.), հայ բնանկարչության և դիմանկարչության ճանաչված վարպետ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1935 թ.):

Ծնվել է Վաղարշապատում, սովորել է Թիֆլիսի Տեր-Հակոբյան պանսիոնում (1879-1881 թթ.), Սոսկվայի Լազարյան ճեմարանում (1881-1885 թթ.) և



Գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում (1885-1894 թթ.): Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1894-1895 թթ.): Մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների Երևանում, Թիֆլիսում, Սոսկվայում: 1916 թ. աջակցել է Հայ արվեստագետների միության ստեղծմանը, ընտրվել ճախազահ: Թաղևսյանը Վրաստանի գեղարվեստական ակադեմիայի հիմնադիրներից (1923 թ.) և առաջին պրոֆեսորներից է:

Լինելով հիմնականում երփնագրող՝ թաղևսյանի տաղանդը դրսևորվել է նաև գրաֆիկայի, կիրառական արվեստների, խճանկարի, մանրաքանդակի ոլորտներում: Թաղևսյանի առաջին իսկ գործերը վկայում են նրա խոր գունազգացողության,



դասական ավանդույթներին հավատարմության մասին: Մեծ արժեք են ներկայացնում նկարչի բարձրաշունչը ու քնարականությամբ լեցուն քնապատկերները («Արագած», 1917 թ., «Արարատ», 1934 թ.):

Թաղլուսյանը փայլուն դիմանկարիչ է: Նրա վարպետությունը դրսևորվել է վաղ դիմանկարներում («Ա. Շիրվանզադե», 1929 թ., «Հ. Թումանյան», 1933 թ.), իսկ թեմատիկ դիմապատկերի ամենանշանավոր գործը նրա վերջին կտավն է՝ «Կոմիտասը» (1935 թ.): Լինելով հայ ազգային ազատագրական շարժման վերելքի ժամանակակիցը՝ Թաղլուսյանը պարբերաբար անդրադարձել է նաև իր ժողովրդի անցյալին («Հոգեհաց. Արտաշեսի մահը», «Տորբ Անգեղ», 1910 թ., «Արշակ և Փառանձեմ», 1921 թ.):

Եղիշե Թաղլուսյանի աշխատանքները գտնվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Մոսկվայի Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանում և այլուր:



Դմիելես՝ հատված Եղիշե Թաղլուսյանի «Նկարչի կինը՝ Ժյուսինը» (1903 թ.) կտավից:


Դարձելես՝ հատվածներ Եղիշե Թաղլուսյանի կտավներից՝ «Ինքնադիմանկար» (1933 թ.), «Սևանա կղզու Առաքելոց եկեղեցին» (Էյջուղ, 1934 թ.):

Էսիկների հեղինակն է Լուսինե Լալայանը:

Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղ/հարգը	արծաք 925°
Քառը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրբ	հարք
Թողարկման հանակը	500 hws
Ծրանառության մեջ է դրվել	20.05.2020 թ.

ԹԵՄԱ՝ ԱՆՎԱՆԻ ԱՆՀԱՏՆԵՐ
ԿԵՐպարվեստ



ԺԱՆՍԵՄ

ԾԱՆԴՅԱՆ
100-ամյակ

7
Varsem

ԺԱՆՍԵՄ (Հովհաննես Սեմերջյան, 1920-2013 թթ.), ֆրանսահայ նկարիչ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ:

1922 թ. Թուրքիայից ընտանիքով գաղթել է Սալոնիկ, այնուհետև՝ Փարիզ: Սովորել է Մոնպանսի ազատ ակադեմիայում, 1939 թ. ավարտել Փարիզի դեկորատիվ արվեստի բարձրագույն դպրոցը:

Հեղինակ է ազգային թեմաներ շոշափող բազում կտավների, նկարաշարերի և դիմանկարների: Ժանսեմի ինքնատիպ արվեստը իրապաշտական է՝ տողորված խոր մարդասիրությամբ: Լուսային հնչեղ երանգներն ու արտահայտիչ գծանկարը ներազրու են դարձնում մարդկանց դեմքերն ու շարժումները, պատկերի ողջ մթնոլորտը:



Դիմերես՝ դրվագ նկարչի «Դիմակներով կինը»
(1978 թ.) կտավից:

Դարձերես՝ Ժանեմի դիմադրասկերը:

Էսիզների հեղինակն է Էդուարդ Կուրդինյանը:
Հուշադրամը հասվել է Լիսվայի դրամահատանում:

Անվանական արժեքը	10 000 դրամ
Սետաղը/հարզը	ոսկի 900°
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրբը	առամնավոր
Թողարկման հանակը	300 համ
Շրջանառության մեջ է դրվել	05.03.2020 թ.



Ժանսեմը արժանացել է մի շաբք միջազգային և պետական մրցանակների, այդ թվում՝ ՀՀ Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանի (2002 թ.), Ֆրանսիայի Պատվո լեգենդի շքանշանի (2003 թ.), ՀՀ Պատվո շքանշանի (2010 թ.):

Ժանսեմի աշխատանքները ցուցադրվում են աշխարհի շատ երկրներում: Բազմաթիվ նկարներ պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, իսկ Հայաստանի Յեղասպանության թանգարան-ինստիտուտում ցուցադրվում է «Յեղասպանություն» (1998-2001 թթ.) նկարաշարը:



Դիմերես՝ հատված նկարչի «Կակաչներ» (1982 թ.)
կտավից:

Դարձերես՝ Ժանսեմի դիմանկարը և հատված նկարչի «Դեղին հագուստով կինը» (1968 թ.)
կտավից:

Էսիզների հեղինակն է Լուինե Լալայանը:
Հուշադրամը հատվել է լիտվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը

100 դրամ

Մետաղ/հարգը

արծաթ 925°

Քաշը

28,28 գ

Չափը

28,0 x 40,0 մմ

Որակը

լավացված

Դրամահատը

հարք

Թողարկման ժամակը

500 համ


Ծրջանառության մեջ է դրվել

05.03.2020 թ.

Թեմա՝ **ԱՆՎԱՆԻ ԱՆՀԱՏՆԵՐ**
Կինո, թատրոն

ԱՆՐԻ ՎԵՌՆՈՅ

Ծննդյան 100-ամյակ



ԱՆՐԻ ՎԵՌՆՈՅ (Աշոտ Մալաքյան, 1920-2002 թթ.), ֆրանսիացի հայազգի կինոռեժիսոր, գրող, Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ: Սովորել է Մարսելի կիրառական արվեստի դպրոցում, այնուհետև՝ Էքսան-Փրովանսի ֆրանսիական լիցեյում, որն ավարտելուց հետո անցել է լրագրողական աշխատանքի: 1945 թ. «Լա Մարսելյե» թերթում Անրի Վեռնոյ կեղծանունով հրապարակել է Հայկական հարցի մասին հոդվածների շարք: 1948 թ-ից աշխատել է կինոյում. աշխարհահոչակ դերասան-

ների մասնակցությամբ ստեղծել է 40-ից ավելի կինոնկարներ («Արգելված պտուղ» (1952 թ.), «Մարսիմ» (1958 թ.), «Նախազահը» (1961 թ.) և այլն):



CÉSAR
ACADEMIE DES
ARTS ET TECHNIQUES
DU CINÉMA

Ժամանակակից կինոարվեստի լավագույն օրինակներից է Անրի Վեռնոյի «Մայրիկ» կենսագրական ֆիլմը, որը նկարահանվել է 1991 թ. և ներկայացնում է Հայոց ցեղասպանությունից մազապուր եղած և Ֆրանսիա գաղթած հայ ընտանիքի պատմություն: 1996 թ. կինոնկարն արժանացել է Ֆրանսիայի «Մեզար» մրցանակի, իսկ սցենարը թարգմանվել և հրատարակվել է տասնյակ լեզուներով՝ դառնալով հայի անկոտրում ոգու և վերապրումի խոսուն վկայագիրը:

BANDE ORIGINALE DU FILM DE
HENRI VERNEUIL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2020

Maurice

Դիմերես՝ Անրի Վեռնոյին տնօրիված ֆրանսիայի Պատվո լեգենդի շքանշանը, «Փարաջանվան բալեր» և «Մեզար» մրցանակների դասկերները:

Դարձերես՝ Անրի Վեռնոյի դիմադրասկերը, կինոժառավեն և «Արգելված դտուղը» (1952 թ.) ու «Մի գիտերկա դասմությունը» (1960 թ.) կինոնկարների դաստաններից հատվածներ:

Էսիզների հեղինակն է Էդուարդ Կուրդինյանը:
Հուշադրամը հատվել է Լիսվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925 ^o
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված հարք
Դրամատուրքը	500համ
Թողարկման բանակը	20.05.2020 թ.
Ծրանառության մեջ է դրվել	

MUSIQUE COMPOSÉE ET INTERPRÉTÉE PAR JEAN-CLAUDE VILLE

ԹԵՄԱ՝ ԱՆՎԱՆԻ ԱՆՀԱՏՆԵՐ
Կինո, թատրոն



ՀՐԱԶՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ (1895-1961 թթ.), հայ անվանի դերասան, ԽՄ ժողովրդական արտիստ (1956 թ.):

Սովորել է Կ. Պոլսի ֆրանսիական և ամերիկյան քոլեջներում, հայկական Էսայան վարժարանում: Բեմական գործունեությունը սկսել է Ա. Պենկյանի թատերախմբում: 1919 թ-ից եղել է Կ. Պոլսի «Հայ դրամատիկի» դերասան: 1922 թ. Վ. Փափազյանի, Մ. Զանանի և այլ դերասանների հետ հաստատվել է Խորհրդային Հայաստանում, 1923 թ-ից դարձել է Երևանի առմիջտ բնակիչ և Առաջին պետրատունի (այժմ՝ Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական) դերասան:

Ներսիսյանի վարպետությունը և տաղանդը լիակատար բացահայտվել են Ֆալստաֆի, Օքելլոյի, Լիր արքայի (Վ. Շեքսպիրի «Վինձորի զվարճասեր կա-


նայք», «Օքելլո», «Լիր արքա»), Պաղտասար աղքարի (Հ. Պարոնյանի «Պաղտասար աղքար»), Էլիքրարյանի (Ա. Շիրվանզադեի «Պատվի համար»), Պրոտասովի (Լ. Տոլստոյի «Կենդանի դիակ»), Սեր-Գրեգորի (Վ. Սարյանի «Իմ սիրող լեռներում է») դերակատարումներում: 1925 թ-ից նկարահանվել է կինոյում՝ Ռուսական («Նամուս», 1925 թ.), Պեպո



(«Պեպո», 1935 թ.), Դավիթ Բեկ («Դավիթ Բեկ», 1944 թ.), Ղամբարյան («Ինչո՞ւ է աղմկում գնուր», 1958 թ.), Ներսես աղքար («Տմօվիկ», 1961 թ.) և այլն:

Անձնավորման արվեստի ճկունության, արտահայտչամիջոցների հարստության շնորհիվ Ներսիսյանին հավասարապես մատչելի էին ողբերգական, դրամատիկական և կատակերգական կերպարանավորումները, որոնց դերասանը հաղորդել է հուզական խորունկ բովանդակություն: Ներսիսյանի ստեղծագործական պարուս կարեկցանքն է հանիրավի հալածված հերոսի նկատմամբ, որն էլ շեշտված է արտիստի հատկապես վերջին շրջանի դերակատարումներում:

Իր նկարագրով, արվեստի գեղագիտական արժեքով և հուզական գրավչությամբ Ներսիսյանն արժանացել է համաժողովրդական ճանաշման:




Դիմերես՝ Հրաչյա Ներսիսյանի հուշաբարին
ղատկերված խորաբանդակից հատված
(գործ՝ Ստեփան Քյոնիքյանի):

Դարձերես՝ Հրաչյա Ներսիսյանի դիմադրակերը
(գործ՝ Ներես Կիրակոսյանի):

Եսիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հուշադրամը հատվել է Լիսվայի դրամահատարանում:

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղ/հարգը	ոսկի 900°
Քառը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրբը	առամնավոր
Թողարկման ժանակը	300 համ
Ծրանառության մեջ է դրվել	20.05.2020 թ.

Անլր Էջմիածնի Մայր Տաճար



Թեմա՝ ԿՐՈՆ
Կրոնական հուշարձաններ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՉՄԻԱՅԻՆԸ համայն հայության հոգևոր կենտրոնն է և Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց Կարողիկոսի նատավայրը:

Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը քրիստոնեական աշխարհի առաջին պաշտոնական Տաճարն է, որը կառուցվել է 301-303 թթ.¹ Ար Տրդատ Գ Մեծ հայոց արքայի և Ար Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի նախաձեռնությամբ և զանքերով: Տաճարը կառուցվել է Ար Գրիգոր Լուսավորչի տեսհիքով, համաձայն որի՝ Աստծո Սիածին որդիի՝ Հիսուս Քրիստոսը, իջնելով Արարատյան դաշտ՝ քաղաքամայր Վաղարշապատ, պատվիրել է, որ հենց այդ տեղում լինի Աստծո տաճարը՝ «բոլոր հավատացյալների աղոթքի ու խնդրանքների տունը և քահանայապետության Աբոնը»:

Ի սկզբանե Մայր Տաճարը կառուցվել է խաչաձև հիմքով և կենտրոնական գմբերով, որով էլ Սուրբ Էջմիածնը համաշխարհային եկեղեցական ճարտարապետության մեջ հանդիսանում է առաջին խաչահիմն գմբեթավոր տիպի տաճարը: XVII դարում Մայր Տաճարի արևմտյան մուտքին կցակառուցվել է եռահարկ զանգակատուն, ինչպես նաև փոքրիկ զանգակատներ՝ հյուսիսային, արևելյան և հարավային արքիդների վրա: 1869 թ. Տաճարի արևելյան պատի ողջ երկայնքով կցակառուցվել է երեք սրահ՝ որպես ավանդատուն-քանգարան: XVII-XVIII դդ. Մայր Տաճարի ներսու զարդարվել է որմնանկարներով, որոնք վրձնել է հայ նշանավոր նկարչական՝ Հովհանքանյան ընտանիքը:

Դարերի ընթացքում Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը վերանորոգվել է հովանավորությամբ հայ իշխանների, ազգային բարեգործների (Ալ. Ման-

թաշյան, Գյուլբենկյան հիմնադրամ, Լուիզ Մանուկյան Սիմոն և Մանուկյան ընտանիք), համայն հայության սրտաբուխ նվիրատվություններով և Հայոց պետության գործակցությամբ:

Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց Կարողիկոսի նախաձեռնությամբ 2012 թ. սկսվել է Մայր Տաճարի համակողմանի հիմնարար նորոգությունը, որն իր ավարտին կհասնի 2021 թ.:

Մայր Տաճարը 2000 թ. ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում:

Կիմերես՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը:

Կարձերես՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի խորանը՝ գմբեթի ներսի հատվածի Փոնին:

Նախագծի հեղինակն է «CIT Coin Invest AG» ընկերությունը, Լիխտենշտեյն:

Հուշարձանը հասվել է «B.H. Mayer Mint» դրամահատարանում, Գերմանիա:

Անվանական արժեքը	30100 դրամ
Մետաղ/հարգը	արծար 999°
Քաշը	1000,0 գ
Տրամագիծը	100,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրթը	ընդհատվող ատամնավոր, համարակալված


Թողարկման քանակը 301 համ

Շրջանառության մեջ է դրվել 21.12.2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀՈՒՍԿԱՐԱՍՄԵՐ 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՏՄՈՒՆԱՎԱՐ ԲԱՆԱԿ





Հայաստանի Հանրապետության հուշադրամների շարքերը և բողարկման արեգակնական օրերը



(1994 - 2020)

ՀԱՅՈՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետականության դասմություն

Արցախ	(արծաթ, 1994 թ.)
Ազգային ժողովի մենայք	(արծաթ, 1995 թ.)
Արտակայան քաղակիորություն	(արծաթ, 1995 թ.)
Արշակունյաց քաղակիորություն	(արծաթ, 1995 թ.)
Բագրատունյաց քաղակիորություն	(արծաթ, 1995 թ.)
Կիլիկյան քաղակիորություն	(արծաթ, 1995 թ.)
Հայաստանի Հանրապետության 10-ամյակ (1991-2001 թթ.),	(արծաթ, 2001 թ.)
Հայաստանի Հանրապետության 15-ամյակ (1991-2006 թթ.),	(արծաթ, 2006 թ.)
Հայաստանի Հանրապետության 20-ամյակ (1991-2011 թթ.),	(արծաթ, 2011 թ.)
Հայաստանի Հանրապետության 25-ամյակ (1991-2016 թթ.),	(արծաթ, 2016 թ.)
Հայաստանի Հանրապետության 25-ամյակ/ռուս.	(արծաթ, 2016 թ.)
Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակ (1918-2018 թթ.),	(արծաթ, 2018 թ.)

Հայաստանի զինված ուժեր

Սարդարադաս	(արծաթ, 1994 թ.)
Հայաստանի զինված ուժեր	(ոսկի/արծաթ, 2005 թ.)
Հայոց բանակի կազմավորման 15-ամյակ	(ոսկի, 2007 թ.)
Շուշիի ազատագրման 15-ամյակ	(ոսկի, 2007 թ.)
Հայոց բանակի կազմավորման 20-ամյակ	(ոսկի/արծաթ, 2012 թ.)
Շուշիի ազատագրման 20-ամյակ	(ոսկի, 2012 թ.)
Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ	(ոսկի/արծաթ, 2017 թ.)
Շուշիի ազատագրման 25-ամյակ	(ոսկի, 2017 թ.)

Հայկական դրամներ

Ճախարակ	(արծաթ, 1994 թ.)
Ազգային դրամի 5 տարին	(արծաթ, 1998 թ.)
Ազգային դրամի 15 տարին	(արծաթ, 2008 թ.)
Ազգային դրամի 20 տարին	(արծաթ, 2013 թ.)
Ազգային դրամի 25 տարին	(արծաթ, 2018 թ.)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄԻԶԱՉՊԱՅԻՆ ՀԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿ-50

Հայաստան-Սփյուռի համաժողով

Նոր հազարամյակ

Հայաստանը Եվրախորհրդի անդամ

Միջազգային քենուային տարի

ՀԱՊ-20 և ՀԱՊԿ-10

Եվրասիական մասնակիություն

ՀԱՊ-25 և ՀԱՊԿ-15

Հայաստանի ԱՄՀՀՔ անդամակցության հոբելյան

(արձար, 1995 թ.)

(արձար, 1999 թ.)

(արձար, 2000 թ.)

(արձար, 2001 թ.)

(արձար, 2006 թ.)

(արձար, 2012 թ.)

(արձար, 2015 թ.)

(արձար, 2017 թ.)

(արձար, 2017 թ.)

Եվրասիական մասնակիության 5 տարին (արձար, 2019 թ.)

ԱՆՎԱՆԻ ԱՆՀԱՏՆԵՐ

Հայ զորավարներ

Մարտաւ Բարդամյան-100

(արձար, 1997 թ.)

Գարեգին Նժդիկ

(ոսկեզօծ արձար/արձար, 2001 թ.)

Մարտաւ Բարաջանյան-100

(արձար, 2006 թ.)

Անդրանիկ Օզանյան-150

(արձար, 2015 թ.)

Վարդան Մամիկոնյան-1625

(ոսկի, 2016 թ.)

Վարդան Մամիկոնյան

(ոսկի, 2016 թ.)

Ծովակալ Խակով-125

(արձար, 2019 թ.)

Գևորգ Զավուտ-150

(արձար, 2020 թ.)

Պետական և հասարակական զործիչներ

Տիգրան Մեծ

(ոսկի, 1999 թ.)

Տիգրան Մեծ

(ոսկի, 2003 թ.)

Վահանշաղի արքա

(արձար, 2005 թ.)

Ավետիսնդր Մանթաշյան-175

(ոսկի, 2017 թ.)

Գալուստ Գյուլբենկյան-150

(ոսկի, 2019 թ.)

Գիտություն

Անամիա Շիրակացի-1400

(արձար, 2005 թ.)

Արեմ Միկոյան-100

(արձար, 2005 թ.)

Վիկտոր Համբարձումյան-100

(արձար, 2008 թ.)

Մովսես Խորենացի-1600

(արձար, 2010 թ.)

Լեռ-150

(արձար, 2010 թ.)

Հովհաննես Օրբելի-125

(արձար, 2012 թ.)

Բենիամին Մարգարյան-100

(արձար, 2013 թ.)

Ուկան Երևանցի-400

(արձար, 2014 թ.)

Գրականություն

Պուտիկին-200

(արձար, 1999 թ.)

Վիլյամ Սարյան-100

(ոսկի, 2008 թ.)

Խաչատրյան Արուլյան-200

(ոսկի, 2009 թ.)

Բաֆֆի-175

(ոսկի, 2010 թ.)

Վահան Տերյան-125

(ոսկի, 2010 թ.)

Միսար Մեծարենց-125

(ոսկի, 2011 թ.)

Հովհաննես Շիրազ-100

(ոսկի, 2014 թ.)

Հովհաննես Թումանյան-150

(ոսկի, 2019 թ.)



Կերպարվես, ճարտարադեսություն

Մշիլ Գորկի-100	(ոսկի, 2004 թ.)
Մարշրու Սարյան-125	(ոսկի, 2005 թ.)
Հակոբ Գյուղջյան-125	(ոսկի, 2006 թ.)
Հովհաննես Այվազովսկի	(արծաթ, 2006 թ.)
Ժան Գառզու-100	(ոսկի, 2007 թ.)
Վարդգես Սուրենյանց-150	(արծաթ, 2010 թ.)
Թեոդոր Աբենեսովիչ	(արծաթ, 2010 թ.)
Թորոս Ռոսլին-800	(ոսկի, 2011 թ.)
Ստեփան Աղաջանյան-150	(արծաթ, 2013 թ.)
Արա Բեմարյան-100	(արծաթ, 2013 թ.)
Էդուարդ Խաքիկյան-100	(արծաթ, 2014 թ.)
Փանոս Թերեմեզյան-150	(արծաթ, 2015 թ.)
Արեակ Ֆերվածյան-150	(արծաթ, 2016 թ.)
Ալեքսանդր Բաժրենով-Մելիքյան-125	(արծաթ, 2016 թ.)
Հովհաննես Այվազովսկի-200	(ոսկի, 2017 թ.)
Հովհաննես Զարդարյան-100	(արծաթ, 2018 թ.)
Վարդան Մախոխյան-150	(արծաթ, 2019 թ.)
Ժանսեմ-100	(ոսկի/արծաթ, 2020 թ.)
Եղիշե Թադևոսյան-150	(արծաթ, 2020 թ.)

Երաժշություն

Արամ Խաչատրյան-100	(ոսկի/արծաթ, 2002 թ.)
Կոմիտաս	(ոսկի, 2006 թ.)
Սայաթ-Նովա-300	(ոսկի, 2012 թ.)
Կոմիտաս-150	(արծաթ, 2019 թ.)



Կինո, թատրոն, կրկես

Լեռնիդ Ենգիբարյան-75	(արծաթ, 2010 թ.)
Սերգեյ Փարաջանով	(արծաթ, 2012 թ.)
Վահրամ Փափազյան-125	(ոսկի, 2013 թ.)
Համն Բեկնազարյան-125	(արծաթ, 2017 թ.)
Անրի Վեռնոյ-100	(արծաթ, 2020 թ.)
Հրաչյա Ներսիսյան-125	(ոսկի, 2020 թ.)



Այլորս

Տիգրան Պետրոսյան-70	(արծաթ, 1999 թ.)
Ֆուլքոնի արքաները	(արծաթ, 2008-2011 թթ.)

Պետե, Էյսերին, Լև Յաշին, Ֆրանց Բեկենբաուեր,
Զբիգնի Բոնեկ, Մարին Կեմլիս, Յոհան Կրոյֆ,
Սիէն Պլատինի

ԱԾԱԿՈՒՅԹ

Գիտություն, գրականություն

Հայոց գրերի գյուղի 1600-ամյակ	(ոսկի, 2002 թ.)
«Մայա» ողբերգության» դրեմի 1000-ամյակ (արծաթ, 2002 թ.)	
Մատենադարան-50	(արծաթ, 2007 թ.)
Սիմիքա Գոչի «Գիր Դասասնի» 825-ամյակ (արծաթ, 2009 թ.)	
Գևանդի համալսարանի 725-ամյակ	(արծաթ, 2009 թ.)
Հայ գրի տպագրության 500-ամյակ	(արծաթ, 2012 թ.)
Հայկական այբուբենի տառերը, 39 տեսակի (ոսկի/արծաթ, 2013 թ.)	
Լազարյան Ճեմարանի հիմնադրման 200-ամյակ	(արծաթ, 2015 թ.)
Հայաստանի դատմության թանգարանի հիմնադրման 100-ամյակ	(արծաթ, 2019 թ.)
Երևանի դեւական համալսարանի հիմնադրման 100-ամյակ	(արծաթ, 2019 թ.)

Արվեստ

- Օմենայի և բալետի թատրոնի հիմնադրման 75-ամյակ
(արծաթ, 2008 թ.)
- Զազ գորգ
(արծաթ, 2010 թ.)
- Հայկական գորգ
(ոսկեզօծ արծաթ/արծաթ, 2018 թ.)
Վիշապագորգ, Արևագորգ, Արծվագորգ, Խորանագորգ,
Խաչխորան գորգ, Մեղվարուն գորգ, Կենաց ծառ գորգ,
Վահանակիր գորգ, Որոտան գորգ, Պատուաքեր գորգ
- Աշխարհի կերամիկան
(արծաթ, 2018 թ.)
Հայկական կերամիկա, Ռուսական կերամիկա,
Հունական կերամիկա, Չինական կերամիկա,
Իրանական կերամիկա

ԿՐՈՆ

Դիցարանություն

- Սասունցի Դավիթ
(արծաթ, 1994 թ.)
- Անահիտ Ասկվածուիի
(ոսկի, 1997 թ.)
- Հայկ Նահապետ
(ոսկի, 2007 թ.)

Քրիստոնեություն

- Նոյի վայրէջքի Արարածից
(ոսկի, 1999 թ.)
- Սահմակ Ա Պատրի
(արծաթ, 2005 թ.)
- XX դարի հայոց կարողիկոսներ
(ոսկի, 2008 թ.)
- Սուրբ Սարգիս գորակար
(ոսկի, 2009 թ.)
- Ավետարանի Տեսարանները հայ
մանրանկարչությունում
(արծաթ, 2010 թ.)
- Ավետում, Սոգերի Երկրագությունը,
Սուրբ Երուաղեմ, Համբարձում
Վիեննայի Միսիքարյան միաբանության հիմնադրման
200-ամյակ
(արծաթ, 2011 թ.)

- Նոյյան տաղան (7,77 / 15,55 / 31,1 գ) (արծաթ, 2012 թ.)
- Նոյյան տաղան (1,0 / 7,78 / 15,55 / 31,1 գ) (ոսկի, 2017 թ.)
- Վենետիկի Միսիքարյան միաբանության
հիմնադրման 300-ամյակ
(արծաթ, 2017 թ.)
- Խոհեման Հայրիկ-200
(արծաթ, 2020 թ.)

Կրոնական հուշարձաններ

- Գառնի
(արծաթ, 1994 թ.)
- Սրբ Էջմիածնի
(ոսկի/արծաթ, 1998 թ.)
- Անի
(ոսկի/արծաթ, 1998 թ.)
- Հաղպատակ
(արծաթ, 1998 թ.)
- Աղքամար
(ոսկի/արծաթ 1999 թ.)
- Գանձասարի վանի
(արծաթ, 2004 թ.)
- Հայաստանի խաչքարեր
(արծաթ, 2011 թ.)
Էջմիածնի խաչքար, Կեչառիսի խաչքար,
Գնդեվանի խաչքար, Գուշավանի խաչքար,
Նորավանի խաչքար, Սանահինի խաչքար
- Հայկական վաներ և եկեղեցիներ
(արծաթ, 2012 թ.)
Սրբ Էջմիածնի Մայր Տաճար, Կեչառիսի վանի,
Գնդեվանի, Գուշավանի, Նորավանի, Սանահին
- Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար
(արծաթ, 2020 թ.)

Էջմիածնի զանձեր

- Սուրբ Գեղարդ
(արծաթ, 2013 թ.)
- Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը
(արծաթ, 2014 թ.)
- Մրգալոյս Մյուտոնի կաքսա
(արծաթ, 2014 թ.)
- Խոտակերաց Սուրբ Նշան
(արծաթ, 2016 թ.)
- Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքով խաչ
(արծաթ, 2016 թ.)
- Սուրբ Գևորգի մասունքով խաչ
(արծաթ, 2016 թ.)

ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Երկաւարքի 10-ամյա տարելից	(արձար, 1998 թ.)
Պետքանի 110-ամյակ	(արձար, 2003 թ.)
ՀՀ վճռաբեկ դատարանի 10-ամյակ	(ոսկի 2008 թ.)
Աճի-1050	(ոսկի, 2011 թ.)
Արտաւա-2200	(ոսկի, 2011 թ.)
Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից	(արձար, 2015 թ.)
ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ	(արձար, 2015 թ.)
Երևան-2800	(արձար, 2018 թ.)
Սարդարադաշի հերոսամարտի 100-ամյակ	(արձար, 2018 թ.)
Հայրենական մեծ դատերազմում տարած հայրանակի 75-ամյակ	(արձար, 2020 թ.)

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Բուսական աշխարհ

Ծիրան	(արձար, 1994 թ.)
Հայկական խաղող	(արձար, 2007 թ.)
Շաղիկների գեղեցկությունը	(արձար, 2010-2011 թթ.)
Գալանտու Արյութենկոյի, Լվածաղիկ Զանգեզուրի,	
Արնենի Հայաստանյան, Քրիում Արամի	
Նուռ	(ոսկի, 2011 թ.)
Աշխարհի ամենահին ծառերը	(արձար, 2014 թ.)
Սիսորաւենի սոսի, Հարյուրավոր ձիերի տագանակենի,	
Հրեշտակի կաղնի, Գեներալ Շերմանի ծառը	

Կենդանական աշխարհ

Կովկասյան ջրասամույր	(արձար/դդիման-նիկել, 1997 թ.)
Հայկական որոր	(արձար/դդիման-նիկել, 1998 թ.)
Կովկասի կենդանական աշխարհ	(արձար, 2006-2008 թթ.)
Հայնական ողմի, Անդրկովկասյան գորտ արջ,	
Կովկասյան անտառակատու, Միջերկրածովային կրիա,	

Առաջավորապես լրացրած, Լայնաֆիք բաղ,
Իշխան, Հայկական իժ, Բեզուարյան այծ,
Հայկական մուֆլոն, Անդրկովկասյան տակիրյան կորագլուխ,
Կովկասյան թավոն բվիլ

Կովկասյան լրացրայուծի տարի (արձար, 2019 թ.)

ԲՆՈՒԹՅԱՆ ԽՈՒԱՐՃԱՆՆԵՐ

Աշխարհի լաբիրինտոսները (արձար, 2016-2017 թթ.)
Բուսոնի լաբիրինտոսը, Վասլի լաբիրինտոսը,
Բարսելոնայի լաբիրինտոսը, Մազոնեի լաբիրինտոսը

ՍՊՈՐՏ

Շախմատի 32-րդ օլիմպիադա	(արձար, 1996 թ.)
Շախմատի 32-րդ օլիմպիադա	(արձար, 1996 թ.)
Շախմատի 32-րդ օլիմպիադա	(դդիման-նիկել, 1996 թ.)
XVIII ձմեռային օլիմպիական խաղեր	(արձար, 1998 թ.)
1998 թ. ֆուրբոյի աշխարհի առաջնություն	(արձար, 1998 թ.)
Առաջին համահայկական խաղեր	(արձար, 1999 թ.)
2006 թ. ֆուրբոյի աշխարհի առաջնություն	(արձար, 2004 թ.)
Շախմատի 37-րդ օլիմպիադա	(ոսկի, 2006 թ.)
Մենամարտի արվեստը	(արձար, 2011-2012 թթ.)
Ջուլու, Ուսու, Կարասե, Կոխ	
2014 թ. ֆուրբոյի աշխարհի առաջնություն	(արձար, 2014 թ.)
2018 թ. ֆուրբոյի աշխարհի առաջնություն	(արձար, 2018 թ.)

ԽՈՐԴՐԱՆՑԱՆՆԵՐ

Կենդանակերպի նշանները (արձար, 2007-2008 թթ./ոսկի, 2008-2009 թթ.)
Խոյ, Ցոլ, Երկվորյակներ, Խեցգեհին,
Սոյուծ, Կոյս, Կետոփ, Կարիճ, Աղեղնավոր,
Այծեղջոյր, Ջրհոս, Ջկներ



2021 թվականի Հայաստանի Հանրապետության հութայրամների բողարկման ծրագիրը

Առն Բարաջանյան-100

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարզը	արձար 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրոֆ
Դրամաշուրջը	ատամնավոր
Թողարկման հանակը	500 հաս

Ալեքսանդր Ստենիխարյան-150

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարզը	արձար 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրոֆ
Դրամաշուրջը	ատամնավոր
Թողարկման հանակը	500 հաս

Գրիգոր Տաթևացի-675

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարզը	արձար 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրոֆ
Դրամաշուրջը	ատամնավոր
Թողարկման հանակը	500 հաս

Կալկաթայի հայոց մարդասիրական ձեմարանի հիմնադրման 200-ամյակ

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարզը	արձար 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրոֆ
Դրամաշուրջը	ատամնավոր
Թողարկման հանակը	300 հաս

**Գ. Սունդուկյանի անվան
ազգային ակադեմիական թատրոնի
հիմնադրման 100-ամյակ**

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարզը	արծաք 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամառութը	առամնավոր
Թողարկման քանակը	500 հաս

**Հայաստանի Հանրապետության 30-ամյակ
(1991-2021)**


Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղ/հարզը	արծաք 925°
Քաշը	168,1 գ
Տրամագիծը	63,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամառութը	հարք, համարակալված
Թողարկման քանակը	300 հաս

**Թքիլիսիի Պ. Աղամյանի անվան
հայկական մետական դրամահիկական
թատրոնի կազմակերպման 100-ամյակ**

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարզը	արծաք 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամառութը	առամնավոր
Թողարկման քանակը	500 հաս

ԱՊՀ 30-ամյակ

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարզը	արծաք 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	38,61 մմ
Որակը	դրուֆ
Դրամառութը	առամնավոր
Թողարկման քանակը	500 հաս



Դրամահատարաններ

ՀՀ կենտրոնական բանկը 2020 թ. համագործակցել է Լիտվայի և գերմանական «B.H. Mayer Mint» դրամահատարանների հետ:

2020 թ. բողարկման բոլոր հուշադրամների հատումն իրականացվել է Լիտվայի դրամահատարանում, բացառությամբ «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» հուշադրամի, որը հատվել է գերմանական «B.H. Mayer Mint» դրամահատարանում:



Литовська прапорна монетна фабрика



Литовська прапорна монетна фабрика була заснована в 1990 році на базі філії французької компанії «B.H. Mayer Mint» в місті Кройцбург (нині Кройцбах), яка виготовляла монети для Німеччини та інших країн. У 1993 році фірма була реорганізована в державну компанію «Литовська монетна фабрика». У 1995 році фабрика почала випускати монети для Литви та інших країн Європи. У 1998 році фабрика стала членом Міжнародної асоціації монетних фабрик (FIM). У 2001 році фабрика отримала сертифікат відповідності ISO 9001.

Литовська прапорна монетна фабрика є найбільшою монетною фабрикою у Східній Європі. Вона виготовляє монети для багатьох країн світу, в тому числі для України. Фабрика має широкий асортимент монет, включаючи пам'ятні монети, ювілейні монети, монети з позолотою та інші.

Литовська прапорна монетна фабрика є членом Міжнародної асоціації монетних фабрик (FIM). У 2001 році фабрика отримала сертифікат відповідності ISO 9001. У 2005 році фабрика почала виготовляти монети для України. У 2010 році фабрика отримала сертифікат відповідності ISO 14001. У 2015 році фабрика отримала сертифікат відповідності ISO 45001.

«B.H. Mayer Mint» прапорна монетна фабрика



«B.H. Mayer Mint» прапорна монетна фабрика була заснована в 1871 році в місті Кройцбург (нині Кройцбах), Німеччина. Фабрика виготовляла монети для Німеччини та інших країн Європи. У 1990-х роках фабрика була реорганізована в державну компанію «Литовська монетна фабрика». У 1998 році фабрика стала членом Міжнародної асоціації монетних фабрик (FIM).

«B.H. Mayer Mint» прапорна монетна фабрика є найбільшою монетною фабрикою у Східній Європі. Вона виготовляє монети для багатьох країн світу, в тому числі для України. Фабрика має широкий асортимент монет, включаючи пам'ятні монети, ювілейні монети, монети з позолотою та інші.

Литовська прапорна монетна фабрика є членом Міжнародної асоціації монетних фабрик (FIM). У 2001 році фабрика отримала сертифікат відповідності ISO 9001. У 2005 році фабрика почала виготовляти монети для України. У 2010 році фабрика отримала сертифікат відповідності ISO 14001. У 2015 році фабрика отримала сертифікат відповідності ISO 45001.



Միջազգային մրցույթ - 2020

ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2019 թ. բողարկված արծաթե հուշադրամը՝ նվիրված աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր և երաժշտագետ Կոմիտասի ծննդյան 150-ամյակին,
Ուսուաստանի Դաշնությունում անցկացված «Գրամմերի համաստեղություն-2020»

14-րդ միջազգային մրցույթում արժանացել է

3-րդ մրցանակի՝ «Տարվա հուշադրամ» անվանակարգում:

Մրցույթին մասնակցելու հայտով դիմել է 26 կազմակերպություն 17 երկրից՝

ներկայացնելով 2019 թ. բողարկված 159 հուշադրամ:

Հաղթող հուշադրամներն ընտրվել են միջազգային ժյուրիի քվեարկության արդյունքներով:

«Կոմիտաս-150» հուշադրամի էսքիզների հեղինակներն են

Վարդան Վարդանյանը (դիմերես) և Էդուարդ Կուրդինյանը (դարձերես):

Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:



ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸՆԸՆԸ մասնագիտությամբ ճարտարապետ է:

Հայտնի է որպես ՀՀ նամականիշների և հուշադրամների դիզայներ: Նրա աշխատանքներից սկսութական շարժման 100-ամյակին նվիրված «Եվրոպա» նամականիշը 2009 թ. 50 եվրոպական փոստային օպերատորների աշխատանքների մրցույթում ճանաչվել է լավագույնը: Ունի հուշադրամների ծնավորման բազմաթիվ աշխատանքներ: Նրա հեղինակած «Հայ գրքի տպագրության 500-ամյակին» նվիրված հուշադրամը 2013 թ. ճանաչվել է լավագույնը իտալական Վիշենցա քաղաքում անցկացված 10-րդ միջազգային մրցույթում, իսկ «Երևան-2800» հուշադրամը «Գրամմերի համատեղություն-2019» 13-րդ միջազգային մրցույթի (ՈՒ) մրցանակակիր է:



ԷԴՈՒԱՐԴ ԿՈՒՐԴԻՆՅԱՆԸՆԸ Ֆիլատելիայի և դրամագիտության համահայկական ակադեմիայի բողակից անդամ է, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ: Կուրդինյանն արժանացել է միջազգային բազմաթիվ մրցանակների ու մեդալների, շուրջ 50 նամականիշների, փոստային բացիկների, բուլկետների և հուշադրամների հեղինակ է: Նրա հեղինակած միջազգային մրցանակակիր հուշադրամների շարքում են «Լվածաղիկ Զանգեզուրի», «Զազ», «Արտաշատ-2200», «Սովուս Խորենացի-1600» հուշադրամները, ինչպես նաև «Հայաստանի Վայրի ծառերը» շրջանառու հիշատակային մետաղադրամների շարքը, որն Արժուաբեր հարցերով միջազգային ասոցիացիայի (IACA) կողմից Սադրիդում կազմակերպված միջազգային դրամագիտական մրցույթում արժանացել է պատվավոր մրցանակի՝ «Լավագույն հիշատակային շրջանառու մետաղադրամ-2015» անվանակարգում:

Ներփին մրցույթ - 2020

2021 թ. ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպել է

«Տարվա լավագույն հուշադրամը» անվանակարգով ներքին մրցույթ:

Մրցույթին ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից

2020 թ. բողարկված հուշադրամները:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցները նախապատվությունը տվել են

«Ժամանեմ-100» ոսկե հուշադրամին (*Էսրիզմերի հեղինակ՝ Էդուարդ Կուրդինյան*) և

«Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամին

(նախագծի հեղինակ՝ «CIT Coin Invest AG» ընկերություն, *Լիսուրենցիկյան*):



ՀՀ արժույթի թողարկումը համակարգող թիմը

ՀՀ կենտրոնական բանկի արժույթի թողարկումը համակարգող թիմը ձևավորվել է 2004 թվականին և տարիների ընթացքում համալրվել նոր աշխատակիցներով: Թիմն իրականացնում է ՀՀ արժույթի թողարկմանն առնչվող բազմազան գործառույթներ:

- ▶ դրամանիշերի՝ շրջանառու մետաղադրամների և թղթադրամների, հիշատակային մետաղադրամների, հուշադրամների, հավաքորդական թղթադրամների և ներդրումային դրամների արտադրության և մատակարարման կազմակերպում,
- ▶ դրամանիշերի լուսաբանում՝ տեղեկատվական բուկետների, հուշադրամներին նվիրված տարեկան հանդեսների, դրամագիտական գործերի հրատարակում,



Մենք սիրու ենք կայություն մեր աշխարհանքը, շարունակ կայութելազործում մեր հմկությունները, չեոք բերում զիգելիքներ՝ նոր նվաճումների հասնելու համար:

- ▶ ՀՀ կենտրոնական բանկի դրամագիտական հավաքածուի համալրում,
- ▶ դրամանիշերի՝ միջազգային մրցույթներին մասնակցության ապահովում:

Մասնագիտական հմտությունների և գործին նվիրվածության շնորհիվ թիմը հասել է մեծ հաջողությունների. ՀՀ կենտրոնական բանկին բերել է թագմարիվ պարզեցներ, այդ թվում 18 մրցանակ՝ ԱՄՆ-ում, Եվրոպայում, Առևտագործության մեջ՝ միջազգային մրցույթներից: ՀՀ թողարկումները բազմից ներկայացվել են միջազգային կոնֆերանսներում և արժանացել ոլորտի մասնագետների հասուն ուշադրությանը:



Բովանդակություն

Ողերձ	Մարշին Գալսյան	2	
Հումարամներ 2020	Սուրեն Սիմոնյան	4	
Կրոն. Քրիստոնություն	Խրիմյան Հայրիկ.	Ծննդյան 200-ամյակ	6
Անվանի անհատներ. Հայ քորավարներ	Գևորգ Զավուշ.	Ծննդյան 150-ամյակ	8
Պատմություն	Հայրենական մեծ լատերազմուն սարած հաղթանակի 75-ամյակ	10	
Անվանի անհատներ. Կերպարվես	Եղիշե Թադևոսյան.	Ծննդյան 150-ամյակ	12
Անվանի անհատներ. Կերպարվես	Ժանսեմ.	Ծննդյան 100-ամյակ	14
Անվանի անհատներ. Կինո, քայլուն	Անրի Վեռնոյ.	Ծննդյան 100-ամյակ	18
Անվանի անհատներ. Կինո, քայլուն	Հրաչյա Ներսիսյան.	Ծննդյան 125-ամյակ	20
Կրոն. Կրոնական հուշարձաններ	Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար	22	
Հայաստանի Հանրապետության հուշարձանների շարժերը և քողարկման տարերվերը (1994-2020)		27	
2021 թ. Հայաստանի Հանրապետության հուշարձանների քողարկման ծրագիրը		32	
Դրամահատարաններ		34	
Միջազգային մրցույթ - 2020		37	
Ներքին մրցույթ - 2020		38	
ՀՀ արժույթի քողարկումը համակարգող թիմը		39	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՃԱԴՐԱՄՆԵՐ 2020

ՀՀ կենտրոնական բանկի հրատարակություն
Կազմեցի՛ Նունի Տերյանը, Անժելա Գևորգյանը
Խմբագիրներ՝ Հարուբյոն Համբարձումյան,
Ուուզաննա Վարդանյան, Գոհար Հովհաննիսյան
Զևավորում՝ Արամ Ուռուտյանի

Տղաֆանակը՝ 600

cba.am

